Արձանագրություն N 3

ՀԱՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Մանկապարտեզի կարիքների համար սննդամթերքի գնում»

ք. Երևան

10 հունվար 2019թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
նախագահ՝ Գոռ Վարդանյան
անդամներ՝ Աննա Սարգսյան
Նարինե Բախչինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մեհրաբյան

1. ՀԱՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման և աճուրդի արդյունքների ամփոփման մասին

(Գ. Վարդանյան)

Ընդունել ի գիտություն, որ

Սահմանված ժամկետում «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Գալիմա» ՍՊԸ-ն ներկայացրել են հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

- «Ֆոտոն» և «Գալիմա» ՍՊԸ-ների ներկայացրած փաստաթղթերը թերի են:
- «Ֆոտոն» ՍՊԸ -ի կողմից ներկայացրած հավելված N3-ում 6-րդ չափաբաժնում նշված ապրանքը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին:
- «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հավելված N3-ում՝ 1-ին և 22-րդ չափաբաժիններում նշված ապրանքը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին:

Հաշվի առնելով վերոնշվածը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «Ֆոտոն» և «ԳԱԼԻՄԱ» ՍՊԸ-ներին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացում շտկել փաստաթղթերում առկա թերությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան Տերյան 105, 3211 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ Գոռ Վարդանյան

Անդամներ Աննա Սարգսյան

Նարինե Բախչինյան

Քարտուղար Ռոզա Մեհրաբյան